ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"6" նոյեմբերի 2013թ

№ 163 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ՆԻՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման մասին» N 762 որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 2013 թվականի ապրիլի 23-ի <<Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օտագործման ավտոմոբիլային տրասնպորտով ուղևորների կանոնավոր փախադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> N 57-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 31-ի նիստի N 4 արձանագրության, **որոշում եմ՝**

1.Հաստատել Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային մարզային հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 31-ի N 4 նիստի արդյունքները՝ համաձայն հավելվածի:

2.Հավելվածում նշված երթուղիների սպասարկման ժամկետ սահմանել երեք տարի:

3.Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Վ.ՀԱԿՈԲՅԱՆ

2013թ նոյեմբերի 6
ք. Կապան

Հավելված
<< Սյունիքի մարզպետի 2013 թվականի
նոյեմբերի 6-ի N 163 Ա որոշման

Արձանագրություն N 4

<< Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրասնպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 31.10.2013թ. N 4 նիստի

Օրակարգում – << Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրասնպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2013 թվականի հոկտեմբերի 22-ին /Սիսիանի տարածաշրջան/, հոկտեմբերի 23-ին /Գորիսի տարածաշրջան/, հոկտեմբերի 24-ին /Կապանի և Մեղրիի տարածաշրջաններ/, կայացած մրցույթների արդյունքների ամփոփման մասին:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի թվով վեց անդամներ և նիստը վարում է հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարդյանը.

Լսեցին – << Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրասնպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2013 թվականի հոկտեմբերի 22-ին /Սիսիանի տարածաշրջան/, հոկտեմբերի 23-ին /Գորիսի տարածաշրջան/, հոկտեմբերի 24-ին /Կապանի և Մեղրիի տարածաշրջաններ/, կայացած մրցույթների արդյունքների ամփոփման մասին:

/Զեկ. Ս.Աղաբեկյան/

Ուսումնասիրելով կայացած մրցույթների ընթացքում մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը և գնահատելով մրցույթներին ներկայացված տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակները հանձնաժողովը **ՈՐՈՇՈՒՄ Է.**

1. Հաղթող ճանաչել <<Աքել>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներմարզային հետևյալ երթուղում.
1) <<Սիսիան-Բռնակոթ>>՝ ավտոմեքենաների մակնիշը՝ ԳԱԶ-32213, պետհամարանիշը՝ 899 UL 52, ԳԱԶ-32213, պետհամարանիշը՝ 35 LV 489:
2. Հաղթող ճանաչել անհատ ձեռնարկատեր Արամ Վարդանյանին ներմարզային հետևյալ երթուղում.
1) <<Սիսիան-Գորիս>>՝ ավտոմեքենաների մակնիշը՝ ԳԱԶ-322132, պետհամարանիշը՝ 35 TS 996, ավտոմեքենաների մակնիշը՝ ՖՈՐԴ, պետհամարանիշը՝ 23 US 224:
3. Հաղթող ճանաչել <<Սամուել Տրանս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներմարզային հետևյալ երթուղում.
1) <<Գորիս-Ակներ>>՝ ավտոմեքենաների մակնիշը՝ ԳԱԶ-322132-220, պետհամարանիշը՝ 1000L, ԳԱԶ-322132, պետհամարանիշը՝ 3023L:
4. Հաղթող ճանաչել <<Լաստ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներմարզային հետևյալ երթուղում.
1) <<Գորիս-Քարահունջ>>՝ ավտոմեքենաների մակնիշը՝ ԳԱԶ-32213, պետհամարանիշը՝ 3022L, ԳԱԶ-32213, պետհամարանիշը՝ 520 LO 43:
5. Հաղթող ճանաչել <<Կապանի ԲՈՒԱՏ>> փակ բաժնետիրական ընկերությանը ներմարզային հետևյալ երթուղում.
1) <<Կապան-Քաջարան>>՝ ավտոմեքենաների մակնիշը՝ YAXING, պետհամարանիշը՝ 005 LV 61, ASHOK LEYLAND, պետհամարանիշը՝ 046 LD 61, ՊԱԶ-32054, պետհամարանիշը՝ 738 SU 51:

6. <<Սիսիան-Շամբ-Լծեն>>, <<Սիսիան-Կապան>>, <<Սիսիան-Աշոտավան-Հացավան-Թասիկ>>, <<Սիսիան –Իշխանասար>>, <<Գորիս-Որոտան>>, <<Գորիս-Խնածախ-Վաղատուր-Խոզնավար>>, <<Գորիս-Տեղ-Կոռնիձոր>>, <<Գորիս-Հարթաշեն>>, <<Գորիս-Հարժիս>>, <<Գորիս-Բարձրավան>>, <<Մեղրի-Ագարակ>>, <<Կապան-Դավիթ-Բեկ>>, <<Կապան-Ճակատեն-Շիկահող-Սրաշեն-Ն.Հանդ-Ծավ>>, <<Կապան-Սևաքար-Եղեգ>>, <<Կապան-Գեղի>>, <<Կապան-Սյունիք>> երթուղիների համար մրցույթային հայտեր չեն ներկայացվել: <<Մեղրի-Կապան>> երթուղու համար հայտ էր ներկայացրել անհատ ձեռնարկատեր Վիլիկ Ազարյանը: Մասնակցի կողմից, որպես պահուստային մեքենա, ներկայացվել էր մեկ դուռ ունեցող ավտոբուս, այն հակասում է ՀՀ Ավտոմոբիլային տրանսպորտի մասին օրենքի՝ հոդված 26-ի 6-րդ կետի պահանջին: Ելնելով վերոգրյալից առաջարկվել է մերժել ԱՁ Վիլիկ Ազարյանի կողմից ներկայացված հայտը:

<<Սիսիան-Դարբաս-Գետաթաղ-Լոր-Լեռնաշեն>> երթուղու համար հայտ էր ներկայացրել <<Աքել>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Ընկերության կողմից ներկայացված հայտում եղել է հետևյալ թերությունը.

ներկայացված մեքենաները ձեռք են բերվել վարձակալության հիմունքներով, ինչը չի համապատասխանում 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշման կարգի 15-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին: Հանձնաժողովի կողմից մերժվել է <<Աքել>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

7. Մրցույթային հանձնաժողովը օրենքով սահմանված կարգով մրցույթում չկայացած նշված երթուղիների համար որոշեց 2013 թվականի նոյեմբերի 25-ին հայտարարել նոր մրցույթ:
8. Սույն որոշումն ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետի հաստատմանը:

(Քվեարկության արդյունքները՝ կողմ 6, դեմ՝ չկա, ձեռնապահ՝ չկա):

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարդյան

անդամներ Ս.Աղաբեկյան

Ս.Ավետիսյան

Կ.Կոզմանով

Ա.Եթայան

Ս.Արզումանյան